ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

04 օգոստոսի 2017 թվականի N 125-Ա

Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 324-Ա որոշումը*՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Մարինե Մարտիրոսյանին*** տրամադրել 2017 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր, 2017 թվականի օգոստոսի 10-ից մինչև սեպտեմբերի 6-ը ներառյալ:

2. ***Մարինե Մարտիրոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Սուսաննա Սահակյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Սուսաննա Սահակյանին*** և «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Արմեն Նազարյանին*** ապահովել «Արագյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Նաիրիի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնագետի *(թերապևտ՝ Մարինե Մուրադյան)* կողմից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի օգոստոսի 04
ք. Հրազդան